Գ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Յուշամատեան նուիրուած դպրոցին հիմնադրման
40 ամեակին

40th Anniversary Booklet

Email: info@armenianschool.org.uk

Website: www.armenianschool.org.uk

Address: Twyford Church of England School,

Twyford Crescent, Acton, London W3 9PP

K. Tahta Armenian Community Sunday School

Classes are held every Sunday from 10:30am to 2:00pm

ԱՌԱՋՆՈՒՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԼԱՆՏԱՅԻ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF THE UNITED KINGDOM AND IRELAND S.
Հովակիմ Եպս Մանուկյան, Հայրապետական Պատուիրակ եւ Առաջնորդ
The Right Revd Bishop Hovakim Manukyan, Primate and Pontifical Legate

Գ ԹԱՀԹԱՅԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՐԱՆ

Սիրելի տնօրինութիւն, հոգաբարձուներ, ուսուցիչներ
Աշակերտներ և հաւատաւոր զաւակներ մեր

Սիրելիներ,
Դպրոցի հիմնադրման օրից անցել են 40 բովանդակալից տարիներ: Դպրոցն արդէն հասուն և կայացած հաստատութիւն է՝ թևակոխելով իմաստնութեան շրջանը: Բազմաթիւ լոնդոնաբնակ հայորդիներ այստեղ են գրաճանաչ դարձել, սփիւռքի դժուարին պայմաններում ուսանել են մայրենի լեզուն՝ գրական հայերէնի ոսկեղնիկ զոյգ ճիւղերն արևմտահայերէնը և արևելահայերէնը, ծանօթացել են աստուածընտրեալ ազգիս Հայկազեան Սուրբ Երկրի ու Սուրբ Եկեղեցու պատմութեանը, սովորել Տիրունական աղօթքը, ուխտել հայ մնալ ու հայութեան ջահը վառ պահել: <<Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>: Առակաց գրքի այս տողերն առաջին հայագիր տողերն են: Երբ այս տողերը գրուեցին չկար հայ գիր ու գրականութիւն: Աստուածաշունչ մատեանի տողերով սկսուեց մեր գրականութիւնը: Երջանկայիշատակ Գարեգին Ա Հայրապետն Հայոց ասում է. <<Նուիրականութիւն կայ այս գիրին մէջը, երբ Ս Մեսրոպի տեսիլքին մէջ երկրատուր զօրութեամբ եկան մեր գրերը և ոչ թէ ինքը նստաւ և իր գրասեղանին վրայ նրանց ստեղծեց: Աստուած ցոյց տուաւ նրան, և երկինք ու երկիր իրար միացան հայոց գրի մէջ՝ Աստուածաշունչ մատեանի Սուրբ Գրքի զօրութեամբ... Աշխարհի բոլոր բանակները, որքան էլ զօրաւոր լինեն, մի օր կը պարտուեն: Ամենայաղթ բանակը երեսունվեց զինուորներից բաղկացած բանակն է՝ հայոց այբուբենը: Ոչ ոք կրցաւ այս բանակին յաղթել, բայց այս բանակը յաղթեց մահուան բոլոր այն վտանգները, որոնք սպառնացին մեր ժողովրդին>>:

Հայ դպրութեան ռահվիրաներից մէկն էլ ասել է, թէ դպրոցը հոգւոյ դարբնոց է, որտեղ մշակւում, կոփւում է պատանին՝ մուտք գործելով ինչպէս թարմ հումք, դուրս գալով որպէս անհատականութիւն՝ հաղորդ մեր Սուրբ լեզուին ու նախնեաց Սուրբ ժառանգին: Արդարև, ուսանելով ոչ միայն կրթութիւն է ստանում պատանին, այլև հիմներն են դրւում նորա հայեցի ապագայի:

Լիայոյս ենք, որ հաստատութեան 40 ամեակը մի նոր խթան ու առիթ պիտի հանդիսանայ, որպիսզի մեր երիտասարդներին առաւել խանդավառութեամբ յաճախեն հայկական դպրոց, զինւորագրուեն 36 տառերից բաղկացած անյաղթ հայոց բանակին և միշտ վառ պահեն ոգին հայոց:

Յոբելենական այս օրն առաջին հերթին աղօթք է իմ շուրթերին՝ դպրոցի հիմնադիր Գևորգ Թահթայի յիշատակին, որ իր գործով միացել է մեր այն մեծերին, ովքեր ազգի հարատևութիւնը տեսնում են նախ և առաջ կրթութեան ու դպրոցի միջոցով:
Նաև արևշատութեան և բարօրութեան աղօթքով ողջունում ենք այն հին ու նոր մանկավարժներին, որոնք ափ ի բուռ աշխատանք են իրականացնում դպրոցն աշխոյժ, մարդաշատ ու հայեցի պահելու համար: Շնորհաւորում եմ ամենքիս:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն
Օրհնութեամբ՝ Հովակիմ Եպիսկոպոս Մանուկեան

Registered office address: Kemp House, 152-160 City Road, London EC1V 2NX
Correspondence address: Bishop's House, 27 Haven Green, Ealing, London W5 2NZ
Email: primatesoffice@armeniandiocese.org.uk – Telephone: 020 8998 9210

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Tел.: 52 66 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

18.06.2018թ

ԼՈՆԴՈՆԻ ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱՅԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Սիրելի՝ հայրենակիցներ,

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շնորհավորում է Լոնդոնի Գեորգ Թահթայան կիրակնօրյա ազգային վարժարանի հոգաբարձուներին, տնօրինությանը, ուսուցիչներին, աշակերտներին, շրջանավարտներին, ինչպես նաև նրանց ծնողներին՝ վարժարանի 40-ամյակի կապակցությամբ:

Հոբելյանին վարժարանն իրավամբ կարող է հպարտանալ իր ձեռքբերումներով: Վարժարանն արժանի տեղ է զբաղեցնում ազգային կրթության և հայ մատաղ սերնդի դաստիարակության գործում: Այն տեղում երբեք չի դոփել: Տնօրինությունն ու մանկավարժներն իրենց գործը միշտ կատարել են մեծ արհեստավարժությամբ և նվիրումով՝ բարձր պահելով վարժարանի հեղինակությունը:

Վարժարանը յուրօրինակ է իրագործվող ուսումնական ծրագրերով և կազմակերպվող միջոցառումներով:

Հարգելի՛ մանկավարժներ, ընդունե՛ք անձամբ իմ և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի շնորհակալությունը՝ ձեր ազնիվ աշխատանքի համար:

Սիրելի՛ աշակերտներ, հուսամ, դուք երբեք չեք հեռանա ազգային արմատներից, ձեր մեջ երբեք չի մարի հայերենի, հայոց պատմության և մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը:

Մաղթում եմ դպրոցին երկար և արդյունավետ գործունեություն, իսկ աշխատակազմին՝ եռանդ ու համբերություն՝ իր դժվար, բայց և շնորհակալ գործում:

18.06.2018

X

Հարգանքով՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
/նախարարի պարտականությունները կատարող/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

25 . 05 . 2018
ՄԽ08.1 : 973-18

Հարգարժա՛ն պարոն Իսկանդարի,
Պատվարժա՛ն պարոն Թարվերդի,
Հարգելի՛ տիկին Թաթուլյան,
Թանկագի՛ն ուսուցիչներ, հոգաբարձուներ, խնամակալ մարմնի և ծնողական խորհրդի անդամներ,

Ջերմորեն շնորհավորում ենք ձեզ՝ Լոնդոնի «Գէորգ Թահթաեան» կիրակնօրյա ազգային վարժարանի հիմնադրման 40-ամյակի առիթով:

Անչափ բարձր ենք գնահատում վարժարանի 40 տարվա գործունեությունը, որը որպես կայացած կրթական հաստատություն, իր լրջագույն, առանցքային դերակատարությունն է ունեցել բրիտանահայ համայնքում հայ ինքնության պահպանման, մայրենին, հայ մշակույթը զարգացնելու և տարածելու առումով:

Մեր սրտագին շնորհակալությունն ենք հայտնում վարժարանի հիմնադիրներին, բոլոր տարիների հոգաբարձուներին, խնամակալությանը, տնօրեններին, ուսուցիչներին, Բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհրդին և, ինչու չէ, նաև ծնողներին, ովքեր տարիներ շարունակ իրենց կարևոր ներդրումն են բերել կրթօջախի շարունակականության գործին:

Վստահ եմ, որ Սփյուռքի նախարարության և վարժարանի միջև գործակցությունն ապագայում էլ ավելի մեծ թափ կստանա, և մեր թիմը միասնական ուժերով, հետևողական ու արդյունավետ աշխատանքով կիրականացնի ձեր սպասելիքները:

Մաղթում ենք ձեզ հաջողություններ գալիք նախաձեռնություններում՝ ի նպաստ Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության և ի բարօրություն բրիտանահայ համայնքի:

Լավագույն բարեմաղթանքներով՝

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ 0010, Երևան, Վ.Սարգսյան 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

tel.: (374 10) 58 56 01 (801)
fax : (374 10) 58 91 57
E-mail: minister@mindiaspora.am

Հայաստանի Հանրապետության Դեսպանություն
Embassy of the Republic of Armenia
ԼՈՆԴՈՆ LONDON

Լոնդոնի Գևորգ Թահթաեան
Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի տնօրինուհի
տիկին Ռուզաննա Թաթուլյանին
20 հունիսի 2018թ.

Հարգելի տնօրինուհի,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ Գևորգ Թահթաեան Ազգային վարժարանի հիմնադրման 40-ամյակի կապակցությամբ: 1978թ-ից ի վեր իր ազգանվեր գործունեության շնորհիվ վարժարանն իր ուրույն տեղն ու դերն է ունեցել հայապահպանության գործում: Հայ մեծանուն բարերար Գևորգ Թահթայանի բարեգործության և համայնքային ու եկեղեցական խորհրդի ջանքերի շնորհիվ հիմնադրված ազգային վարժարանը մինչ օրս շարունակում է կրթել և դաստիարակել հայ երեխաներին և պատանիներին՝ նրանց փոխանցելով հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մասունքները:

Մեծապես գնահատելի է ինչպես վարժարանի տնօրենի, այնպես էլ ողջ ուսուցչական անձնակազմի բարձր պատրաստակամությունն ու անխոնջ ջանասիրությունը՝ հայրենիքից հեռու գտնվող մեր մատաղ սերնդի կրթության գործում: Մեծ հետաքրքրությամբ ենք հետևում վարժարանի նախաձեռնությամբ իրականացվող ինչպես ուսումնական ամավերջի, այնպես էլ տարվա ընթացքում կազմակերպվող միջոցառումներին, որոնց շնորհիվ ակներև է դառնում վարժարանի կողմից կատարված հայրենանվեր անհոգ աշխատանքը:

Մաղթում եմ, որ վարժարանը մշտապես լեցուն լինի հայ երեխաներով, որ բազում տարիներ բրիտանական հողում գործող Գևորգ Թահթաեան վարժարանի հովանու ներքո մենք շարունակենք ունենալ հայկականության օջախ, որտեղից սկիզբ է առնում մայրենի լեզուն, հայրենասիրությունը, պարկեշտ և նվիրված քաղաքացի լինելը:

Կրկին շնորհավորում եմ Ձեզ, դպրոցի կառավարիչներին, ուսուցիչներին, ամբողջ անձնակազմին, աշակերտներին և նրանց ծնողներին, մաղթելով նոր հաջողություններ, քաջառողջություն ու եռանդ՝ հանուն հզոր Հայաստանի, ազատ Արցախի, փառապանծ հայ ժողովրդի:

Հարգանքով՝

Արմեն Լիլոյան
ՄԹ-ում Հայաստանի Հանրապետության
գործերի ժամանակավոր հավատարմատար

ARMENIAN COMMUNITY COUNCIL OF THE UNITED KINGDOM

ԲՐԻՏԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բրիտանահայ Համայնքային Խորհրդի շնորհաւորագիրը Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի հիմնադրման 40-ամեակի կապակցությամբ

Կիրակնօրեայ Ազգային վարժարանը Բրիտանահայ Համայնքային Խորհրդի հիմնադրած ամէնայ նշանակալից կազմակերպութիւնէ մեր գաղութում:

Կիրակնօրեայ վարժարանում սերունդներ շարունակ ստացել են հայեցի դաստիարակութիւն և սովորել իրենց մայրենի լեզուն. Սա իրականացուել է դպրոցի կարող եւ գիտակից տնօրէն-տնօրէնուհիների, որակաւոր ուսուցիչ-ուսուցչուհիների, նուիրուած խնամակալ-հոգաբարձուների եւ անձնազոհ ծնողների շնորհիվ:

Քառասուն տարիների ընթացքում Բրիտանահայ Համայնքային Խորհրդի առաջնահերթութիւնն է եղել և շարունակում է մսել հնարաւորի չափ օժանդակել և աջակցել այս կարևոր հաստատութեանը:

Շնորհաւորելով Վարժարանիս Քառասուներորդ տարեդարձը՝ Համայնքային Խորհուրդը իր շնորհակալութեան խօսքն է ուղում բոլոր այն անձերին որ տարիներ շարունակ անվերապահ նվիրվածութեամբ բարձր են պահել մեր սիրելի վարժարանի անունը:

Հարգանք ձեզ

Բրիտանահայ Համայնքային Խորհուրդ

Armenian Community Council UK

Chairman M. A H Palamoudian, **Vice Chairman** Mr Z Gasparian,
Joint Secretaries Mr V Haladjian, Miss M Jackman, **Financial Controller** Dr S Tatulian, **Members** Mrs A Banian, Mrs R Cherchian,
Mr Z Jerejian, Dr S Karanfilian, Mr R Krikorian, Mr S Mardoian, Mrs M Megerdichian, Mr M Mikaelian, Ms I S Sahakian, Mr R Sarkissian

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի 40 ամեակը

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանը այս տարի՝ 2018 թուականին, տօնում է իր հիմնադրման 40 ամեայ յոբելեանը: Վարժարանն հիմնադրուել է 1978 թականին Բրտանահայ Համայնքային և Եկեղեցական խորհրդի հովանաւորութեամբ և Գևորգ Թահթայի բարերարութեամբ: Վարժարանն իր գործունէութեան 40 տարիների ընթացքում դարձել է կայացած կրթական հաստատութիւն, որտեղ սովորել են հայոց լեզու և հայեցի կրթութիւն են ստացել հարիւրաւոր բրիտանահայ երեխաներ:

Վարժարանն ունի 3 բաժիններ, որտեղ աշակերտները հաճախում են հետևեալ կարգով

- մանկապարտէզ 3-ից 5 տարեկան
- նախադպրոցական 5-ից 7 տարեկան
- դպրոցական 7-ից 16 տարեկան

Վարժարանում դասընթացները անցկացւում են արևմտահայերէն, արևելահայերէն դասա-կան և հայաստանեան ուղղագրութեամբ:

Վարժարանն ունի իր կայացած կրթական ծրագիրը և աշակերտները 9-րդ դասարանն աւարտելիս յանձնում են աւարտական քննութիւն, որը համապատասխանում է անգլիական կրթական համակարգի GCSE-ի մակարդակին:

Ուսումնական ծրագրի մաս են կազմում յատուկ հանդիսութիւնները՝ նուիրուած մեր պատմական կարևոր դէպքերին. Սեպտեմբերի 21-ին, Թարգմանչաց տօնին, Վարդանանց հերոսամարտին, Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Վարժարանում նշում ենք նաև Կաղանդը, Մայրերի օրը, Զատիկը և ուսումնական տարին աւարտւում է աշակերտների մասնակցութեամբ հանդէսով:

Աշակերտների մասնակցութեամբ մեծ շուքով տօնել ենք Տիգրան Մեծի 2150 ամեակը, Անի մայրաքաղաքի 1050 ամեակը, Յովհաննէս Այվազովսկու 200 ամեակը, Գևորգ Բաշինջաղեանի 150 ամեակը, Յակոբ Պարոնեանի 174 ամեակը: Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 100 ամեայ տարելիցի առթիւ վարժարանը Բրիտանահայ համայնքի համար բեմադրեց Գևորգ Թահթայի “Այսպէս ապրեցանք” գիրքը և “Սասունցի Դավիթ” էպոսը: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 25 ամեակի առթիւ ամավերջին հանդէսին աշակերտները ներկայացրին Գևորգ Էմինի “Հաւերժի Ճամփորդը” ստեղծագործութիւնը: Այս տարի Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 103 ամեայ տարելիցի առթիւ բեմադրեցինք Պերճ Զեյթունցեանի “Ոտքի դատարանն է գալիս” պիեսը: Վերոյիշեալ բեմադրութիւնների պատրաստման գործում անգնահատելի դեր է ունեցել ՀՀ վաստակաւոր դերասանուհի Ժենյա Ներսիսեանը:

Լոնդոնում հայ ազգային ինքնութեան պահպանման ու զարգացման, սերունդների հայեցի կրթութեան և դաստիարակութեան, հայապահպանական ծրագրերի իրականացման գործում նշանակալի աւանդի համար Վարժարանն 2010 և 2017 թականներին արժանացել է ՀՀ Սփիւռքի նախարարութեան **“Լաւագոյն հայկական կրթօջախ”** մրցանակներին: Քառասունամեայ գործունէութեան ընթացքում վարժարանն իր անջնջելի հետքն է դրոշմել լոնդոնահայ համայնքի կեանքում:

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն հայոց լեզու և հայկական մշակոյթ փոխանցող կառոյց չէ այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայ ինքնութեան և հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է:

Շնորհաւորում ենք Վարժարանի բոլոր աշակերտներին, ծնողներին, ուսուցչական կազմին, ծնողական յանձնախմբին, հոգաբարձուներին, խնամակալներին, նուիրատուներին, Վարժարանի ներկայ և անցեալի բոլոր նուիրեալներին մեր սիրելի կրթօջախի հիմնադրման 40 ամեայ յոբելեանի առթիւ:

Եկե՛ք, բոլորս միասնաբար աշխատենք, սովորենք, պահենք և պահպանենք մեր լեզուն, մեր դարաւոր մշակոյթը, պատմութիւնը, կրոնը և մեր հայի ոգին:

K Tahta Armenian Community Sunday School's 40th Anniversary

In 2018 K Tahta Armenian Community Sunday School celebrates its 40th anniversary. The school was founded in 1978 under the auspices of the Armenian Community and Church Council of Great Britain and the benefactor-philanthropist Kevork Tahta. During the past 40 years, the school has become a reputable educational establishment.
Our pupils have the opportunity to learn the Armenian language and develop an appreciation of our rich Armenian culture, as well as learning how to be good citizens and make a positive contribution to society.

The Sunday School offers parallel classes both in Eastern and Western Armenian to pupils aged between 3 and 16 years old, and it is composed of the following three sections: (1) Nursery Section (two years), (2) Pre–academic Section (two years), and (3) Academic Section (nine years).

Classes are also offered to adults wishing to learn either Eastern or Western Armenian.

The Sunday School's curriculum covers various aspects of the Armenian language, namely reading, writing, conversation and grammar. Pupils are also taught about important events in the Armenian history, and they learn Armenian songs and dances.

The school has academic programme and at the end of year 9, students are ready to take GCSE equivalent examination in Armenian language.
The special events dedicated to Armenian history and culture are part of the educational programme: September 21, Holy translator's day, the Battle of Vartanans, April 24 the Armenian Genocide commemoration day. At school we celebrate Christmas, Mothers' day and Easter. At the end of each academic year our students present various performances.
Here is the list of performances that our students presented at the End of Year Assembly and for community:

- The 2150 anniversary of Tigran the Great, king of Armenia
- The 1050 anniversary of Ani, ancient capital of Armenia
- The world of fairy tales, where pupils presented different fairy tales by Hovhaness Tumanian
- 200 anniversary of Armenian famous marine painter Hovhannes Aivazovsky
- 150 anniversary of the great Armenian painter Gevorg Bshinjankhian
- 174 anniversary of the great Armenian writer Hagop Baronian.
- Commemoration of the 100th anniversary of the Armenian genocide, the school presented the epic poem "David of Sassoun " and K Tahta's family story
- 25th anniversary of Armenia's Independence - our pupils presented "The traveller to Eternity"-"Հաւերժի Ճամփորդը" by Gevorg Emin.
- Commemoration of the 103rd anniversary of the Armenian genocide, the school presented "Stand up the court is coming" by Perch Zeytuntsyan.
- and more...

K Tahta Armenian Community School is not only teaching Armenian language and culture; it is an environment for preserving the Armenian identity, where teachers plant the seeds of love for our Fatherland in our children.

In 2010 and 2017 the K.Tahta Armenian Community Sunday School has been awarded two prizes by Fatherland for the preservation of Armenian identity and language in the Diaspora.

The prizes have been awarded jointly by the Ministry of Diaspora of the Republic of Armenia and the World Armenian Congress, K.Tahta Armenian Community Sunday School has been nominated as winner in the category of "The best Armenian Educational Establishment in Diaspora".

We are congratulating our students, parents, teachers, members of parents' committee, governors, trustees, all benefactors for 40th anniversary of the school.

Let's work together, preserving our language, our culture, our history, faith and our Armenian spirit.

Ռուզաննա Թաթուլեան
Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային
Վարժարանի Տնօրինուհի
Rouzanna Tatoulian
Headteacher

ԴԻՊԼՈՄ

ՏՐՎԱԾ Է [illegible]

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ԿՈՂՄԻՑ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽ»
ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

«___» _____ 2010 թ.

Երեւան

ՀԱՄԱՀԱՅԿԱՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽՆԱԳԱՀ
ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ

ԴԻՊԼՈՄ

ՏՐՎՈՒՄ Է

ԼՈՆԴՈՆԻ Գ. ԹԱՀՄԱՅԱՆ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
(ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ)

«ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
2016 Թ. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄԻ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿՈՆԳՐԵՍԻ ՆԱԽՆԱԳԱՀ
ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2017

Վարժարանի Հիմնադրման Պատմութիւնը
Մի հատուած Պրն Յակոբ Յ. Փալամուտեանի Մ.Բ.Ե.
ՎԵՐԱՊՐՈՒՄ (Յուշեր եւ տպաւորութիւններ)
ինքնակենսագրականից (տպագրուած 1987 թուականին)

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

1975-ին զիս ամէնէն մտատանջող հարցը հայ մանկտիին համար հայ վարժարանի մը նախաձեռնարկ ըլլալն էր: Հաւանութիւն ստանալէ ետք Լոնտոնահայ Համայնքային Եկեղեցական Խորհուրդին, սկսայ նախապատրաստական աշխատանքներուն ու տարրական դպրոցի մը ծրագրի կազմութեան: Գործի պիտի սկսէինք վստահելով կամաւոր քանի մը ուսուցիչներու գործակցութեան: Ս.Պետրոս եկեղեցւոյ սրահները պիտի գործածուէին որպէս դպրոց: Գրատախտակներու պէտք կար: Գացի օթօյովս տախտակի վաճառականի մը խանութը եւ օթօյիս վրայ բեռցուցի յարմար փայտեր ու տախտակ, եւ երկու օր ատաղձագործութիւն ընելով շինեցի վեց հատ գրատախտակ յարմար եռոտանիներով: Ի՛նչ երջանկութիւն ասոնց վրայ պիտի գրուէր Ս. Մեսրոպի ա, բ, գ – ը:

Գործակիցներուս հետ խորհրդակցելէ ետք հրապարակեցինք մեր առաջին շրջաբերականը որուն ընդառաջելով արձանագրուեցան մօտ երեսուն աշակերտներ: Եռանդը եւ խանդավառութիւնը քաջալերական էր: Թերահաւատ հոգեւորական անձեր ինծի ըսին թէ քանի մը անգամներ իրենք սկսած էին հայ վարժարան Նուարդ Կիւլպէնկեան սրահին մէջ եւ չէին յաջողած:

Ժողովրդական փոքր հաւաքոյթ մը սարքեցինք Ս. Պետրոսի սրահին մէջ ու այս կերպով կատարեցինք դպրոցի բացումը պաշտօնապէս:

Այս հաւաքոյթին ներկայ էին գաղութիս բարեջան Առաջնորդը՝ Գերաշնորհ Տ. Ներսէս Եպիսկ. Պոզապալեան եւ լուսահոգի Գէորգ Թահթան, որոնք խօսեցան եւ բարեմաղթութիւններ կատարեցին ձեռնարկի յաջողութեան համար:

Վերոյիշեալ հաւաքոյթի վերջաւորութեան ազնուայարդ Տիար Գէորգ Թահթան մօտեցաւ ինծի ու բացաւ իր լուսապայծառ ներաշխարհը: “Յակոբ ճան, քեզի ըսելիք մը ունիմ” ու քաշեց զիս մէկ կողմ ու ըսաւ “ Հարստութիւնս բաժնած եմ երեքի, երկու զաւակներուս և անգլիահայութեան: Քանի մը օրէն Խորհուրդին տրամադրութեան տակ պիտի դնեմ հարիւր հազար սթերլինգի գումար մը, որ պիտի մնայ որպէս անձեռնմխելի գումար, եւ որուն միայն տոկոսը պիտի գործածուի Ս. Եկեղեցւոյ պայծառութեան և հայ երեխաներուն հայերէնի ուսուցման համար”: Համբուրեցի զինքը եւ իր արտօնութեամբ կատարեցի պէտք եղած յարմար յայտարարութիւնը: Սրահը ելեկտրականացաւ: Յուզումը մեծ էր եւ ուրախութիւնը՝ աննախընթաց: Նոր սկսող դպրոցը բնականաբար ու պատշաճօրէն պիտի կոչուէր “ Գէորգ Թահթայեան Վարժարան”:

Ատեն մը ետք աշակերտութիւնը ստուարացաւ եւ եկեղեցւոյ սրահը անբաւարար նկատուեցաւ: Մօտեցանք Ealing Borough–ի կրթական տես-չութեան ու վարձեցինք Acton-ի Reynolds High School-ի շէնքը կիրակի օրերը գործածութեան համար:

Կազմակերպեցինք աշակերտներու փոխադրութիւնը օթօպուսներով:

Այդ շրջանին Համայնքային Խորհուրդը ընտրեց Մշակութային Մարմին մը ստանձնելու համար վարժարանին վերին վարչութիւնը՝ հետեւեալ անձերէն բաղկացեալ.

Տիարք Յարութիւն Այվազեան՝ Ատենապետ
Յակոբ Յ. Փալամուտեան՝ փոխ-ատենապետ
Հայաստան Վարդանեան
Տիկին Օֆէլիա Գույումճեան
Տիկին Անահիտ Ղազարեան
Տօքթ. Յովհ. Աւագեան

Յիշարժան է յիշել անունները երեք անձնուէր անձերուն որոնք վարժարանի սկզբնական շրջանին աշակերտներուն մատակարարեցին օշարակ եւ պիսքուի մինչև այն օրը երբ կազմուեցաւ պաշտօնական Ծնողական Յանձնախումբ: Այդ անձերն էին Տիգրան Էքրէք և Տիկիններ՝ Թամար Ստեփանով եւ Լիտիա Փալամուտեան:

Աշակերտներու թիւը հասաւ մօտ 200-ի և 18 ուսուցիչ- ուսուցչուհիներ պաշտօնի կոչուեցան:

Տնօրէն նշանակուեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութենէն և Լոնտոնի Imperial College-էն շրջանաւարտ Գէորգ Չորպաճեանը: Երեք տարիներ արդիւնաւորապէս պաշտօնավարելէ ետք Պրն. Չորպաճեան հրաժարեցաւ Ափրիկէ մեկնելուն պատճառաւ: Անոր տեղ տնօրէն ընտրուեցաւ Տօքթ. Յովհ. Աւագեանը, որ խղճամիտ աշխատութեամբ, գովելի նուիրումով եւ ուսումնասիրութեամբ կազմեց կանոնաւոր ուսումնական ծրագիր որուն իրագործման համար գտաւ յարմար դասագրքեր:

Վարժարանային բոլոր հարցերուն մէջ Պրն. Յարութիւն Այվազեան՝ որ եղած էր Մելգոնեան Կրթական Հաստատութեան փոխ-տնօրէն եւ ես ուսուցիչ՝ չզլացաւ տալու իր խորհուրդները երբ դիմուեցաւ իրեն Գէորգ Թահթայեան Վարժարանի վերելքին համար:

Ազգային բարերար Գէորգ Թահթան մեզի կ՚ըսէր թէ կ՚ապրէր իր կեանքին ամենաերջանիկ օրերը, տեսնելով հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցումը հայ մանկտիին: Իր երազն էր ամենօրեայ հայ վարժարանի մը հիմնարկութիւնը Լոնտոնի մէջ: Անկարելի չէ ասիկա եթէ մեր միւս հարուստներն ալ սթափին իրենց թմբիրէն ու հետեւին իր օրինակին:

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի
աշակերտութեան , ուսուցչական կազմի, ծնողական յանձնախմբի և տնօրինութեան 1978թ ընդհանուր լուսանկար:
Կենտրոնում՝ վարժարանի բարերար՝ Գ Թահթան և այդ ժամանակի Լոնդոնահայ Համայնքային և
Եկեղեցական Խորհրդի անդամները

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի աշակերտութեան , ուսուցչական կազմի, հոգաբարձուների,
ծնողական յանձնախմբի և տնօրինութեան 2017-2018 ուսումնական տարեշրջանի լուսանկար

Ջերմ շնորհաւորանքներ մեր սիրելի Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանին, որն արդար հպարտութեամբ այսօր տօնում է իր հիմնադրման 40 ամեակը։

Հպարտ եմ, որ առիթ եմ ունեցել ծառաեալու այդ կրթական կարևոր օջախում հիմնադրման օրւանից ի վեր՝ 27 երկար ու ձիգ տարիներ, որից 22 տարի որպէս տնօրէն։

Այդ ընթացքում առիթ եմ ունեցել համագործակցել բազմաթիւ նուիրեալ անձանց հետ և այդ միացեալ ջանքերի շնորհիւ հարիւրաւոր հայ մանուկներ և պատանիներ առիթ են ունեցել վայլել հայկական ջերմ մթնոլորդը և դառնալ վարժարանի հպարտ շրջանաւարտներ։

Ողջունում և շնորհաւորում եմ բոլոր այդ նուիրեալներին՝ անցեալի և ներկայի տնօրէններին, հոգաբարձուներին, ուսուցիչներին և ծնողներին, բարի երթ մաղթելով Թահթաեան Վարժարանին դէպի ձեռք բերումներով լի փայլուն ապագայ։

ԱՆԱՀԻՏ ՂԱՋԱՐԵԱՆՑ

Շնորհաւորում ենք Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի հիմնադրման քառասուն ամեակը: Գնահատելով այս երկար տարիների տքնաջան գործունէութիւնն առաջին իսկ օրւանից, շնորհաւորում և մաղթում ենք Վարժարանին յարատև յաջողութիւններ:

Վահէ և Սեդա Կարապետեան

Բենլեան խնամակալութիւն
Benlian Trust

Սիրելի Գ Թահթա Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի ներկայ և անցեալ ուսուցչական կազմ, վարչական և ծնողաց մարմիններու անդամներ, կը շնորհաւորենք Ձեր քառասնամեայ բեղուն և ազգանուէր դաստիարակչական գործունէութիւնը: Պէնլիեան Հիմնարկը հպարտութեամբ կ՛աջակցի դպրոցի նոր սերունդի պատրաստման անդադար և տքնաջան ջանքերուն:

To Teachers, Governors and Parents' Committees past and present of the K. Tahta Sunday School,
Congratulations on 40 years of nurturing and educating Armenian children on their rich cultural heritage.
The Benlian Trust proudly supports the School in its unceasing efforts towards this milestone and beyond.

With our support and best wishes

we congratulate the

K Tahta Armenian Community

Sunday

School on its 40th Anniversary

Kassardjian Sis Trust

This year we are celebrating the K Tahta Armenian Community Sunday School's 40th anniversary. The **AGBU London Executive Committee** congratulates all students, parents, teachers, members of parents' committee and all benefactors on this happy occasion.

We appreciate all of the hard work that goes into preserving our language, culture, history and faith.

With Our Best Wishes,

The AGBU London Branch Executive Committee

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ
ARMENIAN RELIEF SOCIETY OF GREAT BRITAIN

Ջերմօրէն շնորհաւորում ենք մեր սիրելի Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ ԱզգայինՎարժարանի հիմնադրման40-ամեակը և մաղթում նրա բոլոր կազմին՝ անսպառ ոյժ և կորով, մեր Հայ Ազգի մատղաշ սերունդի կրթութեան և դաստիարակութեան սրբազան աշխատանքների մէջ:

Նորանոր յաջողութիւնների և երկար տարիների լաւագոյն մաղթանքներով՝

Հայ Օգնութեան Միութիւն

Մեծն Բրիտանիոյ Մասնաճիւղ

www.hinnadrum.org

HAYASTAN ALL-ARMENIAN CHARITABLE TRUST
GREAT BRITAIN
"ՀԱՅԱՍՏԱՆ" ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԹՐԱՍՏ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

Registered Charity No 1039031
Armenian Vicarage, Iverna Gardens, Kensington, London W8 6TP
Contact: 23 Norman Way, West Acton, London W3 0AS Tel: 020 8993 2366

28 Փետրուար 2018

Լոնդոնի "Գևորգ Թահթայեան" Կիրակնօրեայ
Ազգային Վարժարանի տնօրէն
Տիկ. Ռուզան Թաթուլեան

Յարգելի Տիկ. Թաթուլեան

Հայաստան Համահայկական Հիմնադրամի Մեծն Բրիտանիոյ մասնաճիւղի անունից ի սրտէ շնորհաւորում եմ Ձեզ, "Գևորգ Թահթայեան" վարժարանի հոգաբարձութեան և ուսուցչական կազմին վարժարանի հիմնադրման քառասունամեայ յոբելեանի առիթով:

Կրթական և մշակութային գործը առաջնահերթ և կարևորագոյն պայման է ազգային ինքնութեան և ոգու պահպանման հարցում: Յատկապէս մեծ նշանակութիւն և կրկնակի կարևորութիւն է ստանում այս գործը երբ Սփիւռքում և օտար պայմաններում է տարւում այն:

Վարժարանը՝ որտեղ ես ևս առիթ եմ ունեցել դասաւանդելու ինձ տարիներ շարունակ, անգնահատելի և դժւարին աշխատանք է տարել մշտապէս, հայ մանուկների և պատանիների մէջ սերմանելու սէր և գիտակցութիւն հանդէպ հայրենիք, հայ լեզու և հայ մշակոյթ:

Մաղթում ենք Ձեզ, վարժարանի վարչական և ուսուցչական կազմին ոյժ և կորով, նաև յարատև նւիրւածութիւն շարունակելու այս հայրենաւէր, դժւարին գործը, վառ պահելու համար մեր մատաղ սերունդների սրտերում և մտքերում իրենց ազգային ինքնութեան գիտակցութիւնը:

Յարգանօք՝

Արմինէ Կարապետի
Ատենապետ

Trustees
Bishop Hovakim Manukyan, *(Hon.)* **Armineh Carapetl,** *Chairperson.* **Vernon Hovsepian,** *Vice Chairman.* **Hratch Tokatlian. Rev Shnork Bagdassarian. Vicken Couligian. Melina Carapeti-Marootian. Anahid Kazarians. Steve Mouradian. Simon Haroutunian. Richard Anooshian.**

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ

CAIA

CENTRE FOR ARMENIAN
INFORMATION AND ADVICE

Visa, Immigration, Housing & Welfare Advice Services | Health and Care Services | Elders Lunch Club | Youth Club | Pre-School Playgroup | Cultural, Educational & Training Events | Reference Library

www.caia.org.uk

facebook.com/hayashen

twitter.com/caia_hayashen

instagram.com/caia_hayashen

The Centre for Armenian Information and Advice provides a central resource for Armenians in the UK. We work to make a difference to people's lives by providing services and activities to meet the needs of our community and create opportunities to research, maintain and celebrate Armenian culture and heritage.

Congratulations on your 40th Anniversary - a magnificent achievement

0208 992 4621 | info@caia.org.uk
105a Mill Hill Road,
London W3 8JF

Registered charity No 1088534

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ԼՈՆԴՈՆԻ ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆ
HOMENETMEN – LONDON
Armenian Scouting Association of England

<u>Միրելի Գ. Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի պատասխանատու կազմ և սաներ,</u>

Շնորհաւորելով վարժարանի 40 ամեակը, Վարչութիւնս կու գայ իր գնահատանքի խօսքը ուղղելու Տնօրենութեան, Ուսուցչական կազմին, Հոգաբարձութեան և բոլոր նուիրեալ գործիչներուն, որոնք տարիներ շարունակ նշանակալից դեր ունեցան հայեցի դաստիարակութեամբ զինուած սերունդներու կրթութեան աշխատանքին։
Մաղթելով ձեզ յառաջդիմութիւն և նորանոր նուաճումներ շարունակելու համար ձեր սրբազան առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.-ի Լոնդոնի Մեկուսի Շրջանի Վարչութիւն

ARMENIAN
INSTITUTE
ՀԱՅ ՀԻՄՆԱՐԿ

Լոնդոնի Հայ Հիմնարկը շնորհաւորում է
Գէորգ Թահթաեան կիրակնօրեայ
ազգային վարժարանի 40-ամեակը՝
վարժարանին մաղթելով յաջողութիւն,
նպատակների իրականացում
եւ փայլուն ապագայ:

Congratulations to K Tahta Armenian Community Sunday School on the occasion of the School's 40th anniversary. We wish the School continued success in helping pupils learn about their Armenian heritage.
Armenian Institute, London

www.armenianinstitute.org.uk

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՈՆ

Շնորհաւորելով ու մեծապէս գնահատելով Գ. Թահթաեան Ազգային Վարժարանի 40 Ամեայ գործունէութիւնը կը մաղթենք յաջողութիւն և արդիւնաւէտ գործունէութեան շարունակականութիւն։

Ինձի համար 22 Յունուար 2017-ը եղաւ երազային օր մը։ Տեսնել այդքա՛ն աշակերտներ, այդքա՛ն ուսուցիչներ, այդքա՛ն դասարաններ, արեւելահայերէնի ուսուցում՝ դասական ուղղագրութեամբ, նոյնպէս արեւելահայերէնի ուսուցում՝ այս անգամ հայաստանեան ուղղագրութեամբ, արեւմտահայերէնի ուսուցում՝ դասական ուղղագրութեամբ, ամէն մէկը զատ-զատ դասարաններու մէջ, տարբեր ուսուցիչներով, եւ տակաւին՝ Հայոց պատմութիւն, նաեւ՝ երգ ու պար։ Կարծէք Արեւելքի մեր հայկական ամենօրեայ վարժարաններէն մէկը ըլլար՝ Եւրոպայի կուրծքին։ Անհաւատալի էր, բայց՝ իրաւ։ Երեւոյթ մըն էր Գէորգ Թահթայեան "միօրեայ" ազգային վարժարանը։ Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ օրինակելի դպրոց մըն էր։ Երանի՛ օրինակը վարակիչ ըլլար ուրիշ միօրեաներու համար։

Յոյսով լեցուած վերադարձայ Փարիզ։ Վարձքը կատար՝ ուսուցիչներուն եւ Տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանին, ինչպէս նաեւ՝ հոգաբարձուներուն, ծնողական յանձնախումբին եւ մեծ ու փոքր բարերարներուն։

Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան.

Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ
Ազգային Վարժարանին
կը շնորհաւորենք
40-րդ ամեակին առթիւ:
Կը մաղթենք ուսուցչական եւ
հոգաբարձութեան կազմին
ուժ եւ կարողութիւն շարունակելու
ազգասիրական եւ հայեցի
դաստիարակութեան
պատասխանատու գործը:

Ժիրայր եւ Մայտա Գէորգեան

Armenian schools promote
Armenian Cultural heritage as well as
the love to our Motherland

We wish successful future to K. Tahta
Sunday school in London.

Mr Vartan & Mrs Rosette Ouzounian

Շնորհաւորում ենք Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի հիմնադրման 40-րդ տարեդարձը, ցանկանում ենք մեր անվերապահ զգացումները յայտնել Ձեզ, Ձեր կատարած վսեմ գործի կապակցութեամբ: Շնորհակալութիւն նուիրեալ բոլոր ուսուցիչներին, ովքեր անվերապահ իրենց բոլոր մտային, հոգեկան և ֆիզիկական կարողութիւններն են ի սպաս դնում մեր ազգի երեխաների զարգացմանը և որպէսզի հայոց լեզուն կենդանի մնայ: Ես որպէս այդ ազգի մի փոքրիկ մասնիկը կամենում եմ ամբողջ հոգով շնորհակալութիւն յայտնել մեր մշակոյթի իսկական դրօշակակիրներին:

Յարգանօք՝

Զարէհ և Արմինէ Մանուէլեան

TATEOSSIAN

LONDON

ARMENIAN COLLECTION

85 SLOANE SQUARE	27 CONDUIT STREET	IMPERIAL WHARF	1/4 ROYAL EXCHANGE
+44 20 7730 3676	+44 20 7499 9324	+44 20 7751 6434	+44 20 7283 3434

WWW.TATEOSSIAN.COM

Վարժարանի 40-ամեակին նուիրուած շնորհաւորանքներ դիմատետրից (Facebook)

Ռուզաննա ջան, թող ձեր կրթօջախում հավերժ ղողանջի հայոց լեզուն:

Պրոֆ. Ջուլիետա Գյուլամիրյան, դասախոս, Երևան Խ Աբովյանի անվ. Մանկավարժական ինստիտուտ

Փառք ու պատիվ հայապահպան մեր ուսուցիչներին:

Թամարա Թովմասյան, դասախոս, Երևան Խ Աբովյանի անվ. Մանկավարժական ինստիտուտ

Շնորհաւորութիններս, ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ և շատ ապրիք սիրելի ուսուցիչներ, վարձքերնիդ կատար: *Նայիրի Բալանեան, ուսուցչուհի, Ֆիլադելֆիա, ԱՄՆ*

Շնորհավորում եմ!!! Շատ գեղեցիկ հիշողություններ ունեմ Ձեր ղեկավարած դպրոցից:

Դկտ Արտակ Մովսիսյան, դասախոս, Երևանի պետական համալսարան

Մեծ սիրով և հիացմունքով շնորհավորում եմ Թահթայան վարժարանի հիմնադրման 40-ամյակը: Թահթայան կիրակնօրյա դպրոցի վաստակը շատ մեծ է լոնդոնահայ երեխաների հայեցի դաստիարակության հարցում: Նոր նվաճումներ և բեղուն գործունեություն. . . Սիրելի տիկին Ռուզան, ի դեմս Ձեզ, շնորհավորում եմ բոլոր այն անձանց, ովքեր վաստակ ունեն այդ սուրբ և շնորհակալ աշխատանքում:

Մեյրանուհի Գեղամյան, Երևան, գրող, հրապարակախոս, Միլվա Կապուտիկյանի անվան տուն-թանգարանի աշխատակցուհի

Շնորհավորում եմ, սիրելի Ռուզաննա: *Սվետլանա Աբրահամյան, Նիդերլանդներ*

Շնորհավոր Թահթա ազգային վարժարանի 40-ամյակը, դուք տվել եք շատ լավ շրջանավարտների մեծ հունցք: Շնորհաւորում եմ տնօրինուհուն և ողջ ուսուցչական կազմին, վարձքներդ կատար և բարի երթ նոր ուսումնական տարուն:

Լիլի Ադամյան, Լոնդոն

1000 շնորհաւոր, Ձեր լաւագոյնը տուել էք ու հայ սերունդ էք պատրաստել: Կեցցէ՛ք Դուք. . . *Տիրուկ Մարգարեան, ուսուցչուհի, Բեյրութ, Լիբանան*

Ծաղկում և բարգավաճում Ձեր կրթօջախին, Ռուզաննա ջան:

Սվետլանա Միքաելյան, ուսուցչուհի, Մոսկվա, ՌԴ

Շնորհաւոր դպրոցին քառասնամեակին և նորանոր յաջողութիւններ Ձեր կրթական օջախին: *Յասմիկ Քեշիշեան Հադդադ, ուսուցչուհի, Լիբանան*

Congratulations to K Tahta School. Our family has very fond memories from the day it was established! *Յասմիկ Այւազեան, Թոփալեան , ծնող, Լոնդոն*

Հարատևություն դպրոցին և մեծաթիվ աշակերտություն դպրության օջախին

Խաթուն Խորոզյան ուսուցչուհի, Լոնդոն

Վարժարանի Առօրեան

25

K Tahta Armenian Community Sunday School
Wishes to extend its heartfelt gratitude
to all those who contributed with their generosity and support
to our school's 40th anniversary.

Organisations, Societies, Trusts, Benefactors

ACC of GB
Benlian Trust
Barkev Kassardjian Sis Trust
AGBU London
Armenian Relief Society
Armenian Institute
CAIA
Tateossian London
Mrs A Kazariants
Mr & Mrs V Karapetian
Mr & Mrs P Katsouris
Mr & Mrs J Kevorkian
Mr & Mrs V Ouzounian
Mr & Mrs Z Manuelian
Anonymous Friends
A well wisher